Դ. ՏԱՐԻ ԹԻՒ 4175 — ՁՈՐԵՔՇԱԲԹԻ 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1887 — (Ն. Տ.) 14 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1887 — 28 ՐԷՊԻԼ, ԷՎՎԷԼ, 1305

20 ՓԱՐԱ (ՄԻՆՉԻ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ)

ԱՄԻՍԱԿԱՆ ԹԱՐԹ ՄԸ ԵՒ ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԱՌՆԱՅԻՆ ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԹԵՐԹԱՏՈՒՆ Դարաքեա, Նորատունկեան-խան

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ

ՕՐԱԳԻՐ

20 ՓԱՐԱ (ՄԻՆՉԻ ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ)

ԳԱՅԱՆՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար Տարեկան	դահեկան արժէք	160
» » Կիսամեայ	» »	80
» » Եռամսեայ	» »	40
Գաւառաց Տարեկան թղթատարով	» »	240
Գաւառաց Հանրագիր տարեկան թղթատարով	» »	120
Օտար երկիրներ Տարեկան	Գրանց	56
» » Կիսամեայ	» »	28

Դուրս զրկուած լրագրոց ճամբու ծախքը Տնօրէնութեան վրայ է. Խմբագրութեանս զրկուած նամակ կամ գրութիւն ետ չտրուիր.

Les annonces sont reçues AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 2 ԴԵԿՏԵՄԲԵՐ, 1887

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

ՖՐԱՆՍԱՅԻ Նոր Նախարարութիւնը վերջապէս կազմուեցաւ. «Զօրաւոր» կոչուած տեսակէտն չէ այս Նախարարութիւն. Զափաւոր հանրապետական դոյն մ'ունի բոլորովին. Պ. Բրիսանսոյի կուսակցութենէն մարդ չերեւիր այս կազմութեան մէջ. Ուրեմն, «հանրապետական համախմբման» գաղափարն ի դերեւ ելած է. Որովհետեւ Պ. Քառնոյի անուան վրայ Զափաւորք և Արմատականք միացած էին, կը յուսացուէր և կը փափաքուէր որ իւր կազմիլիք առաջին Նախարարութիւնն եւս հանրապետական ամէն խմբակներու ներկայացուցիչ լինէր, և ըստ այնմ հետեւելի ներքին քաղաքականութիւնն ամէն խմբակաց պահանջումները գոհացնէր. Այս ընդհանուր ակնկալութեան գոհացում տալու համար Պ. Քառնոյի չաբաթէ մ'ի վեր բրած փորձերն անյաջող ելան. Նոր Նախարարութիւն հանրապետականաց միայն մէկ խմբակներկայացուցիչ է, և այն խմբակն՝ իսկ կարողագոյն մարդիկը չի պարունակեր. Պ. Դիւառ, որ ստանձնած է միանգամայն երեւոյթից Նախարարութիւն, երեւելի հանգամանքներով օժտուած անձնաւորութիւն մը չէ, կամ գէթ ցայս վայր առաջնակարգ դերը մը չէ բռնած իւր կուսակցութեան մէջ. Իբրեւ Մերակոյսի անդամ, օրոյն հրատապ խնդրոց մէջ նշանաւոր դեր մը չէ կատարած. Ճէզայիրի կուսակալ եղած է. Պ. Ժ. Ֆէրրիի պատեհական Նախարարութեան մէջ երկրական Նախարար էր. Հաւանական է որ, իբրեւ երկրական Նախկին Նախարար, երկրացոյցի հաւասարակշռութեան միջոցները քննած լինի, և որովհետեւ Ֆրանսայի ներքին գործոց մէջ երկրականը կարեւոր տեղ մը կը բռնէ, այս ուղղութեամբ Պ. Դիւառի մատուցանելի ծառայութիւնը ուրիշ կարգի ձիրքերու բացակայութիւնը թերեւս փոխարինէ. Պ. Ֆլուռէնս կը պահէ արտաքին գործոց Նախարարի պաշտօնն. Արտաքին գործոց Նախարարութիւնը Ֆրանսայի կարեւորագոյն դիւանագէտներէն մերժուած մէկ վայրկենին Պետական Խորհրդոյ պարզ պաշտօնատարութենէ յանկարծ արտաքին գործոց Նախարարութեան բարձրացող այս հաւեստ մարդ՝ Պ. Ֆլուռէնս, Ֆրանսական Նախարարութեանց անհրաժեշտ մէկ անդամը դարձած է. Թէ իւր ազգակիցք և թէ օտարազգիք գոհ են իւր արտաքին քաղաքականութենէ, և արտաքին գործոց Նախարարի մը համար աւելի մեծ գովեստ չի կրնար լինել. Պ. Ֆալլիէռ, նախկին սակաւօրեայ Նախարարապետ, որ դեռ երէկ անյաջողութեան կը դատապարտուէր Նոր Վարչութիւնը կազմելու ձեռնարկին մէջ, իբրեւ պարզ անդամ կը մտնէ Նոր Նախարարութեան մէջ, գաւառական գործոց վերատեսչութիւնն ստանձնելով. Այս Նոր Նախարարութեան առերեւոյթ տկարութիւնն իսկ իւր զօրութիւնը կրնայ լինել. զի կարելի է որ բուռն առերեսութիւն չներշնչէ Արմատականներուն և ժամանակ մը յաջողի վարել երկրին գործերն. Ուշագրաւ իրողութիւնն այն է սակայն թէ հանրապետական այլ և այլ խմբակները չեն յայտնած՝ փոխադարձ դիմմամբ՝ հաճաձայնիլ միօրինակ հիմնագրոյ մը վրայ. Պ. Բրէմանսոյի կուսակիցք կ'երևի թէ կ'ուզին փորձով ապացուցանել թէ Զափաւոր Հանրապետականք անկարող են երկիրը կառավարել. Ուստի մինակ կը թողուն զանոնք. Բայց եթէ Պ. Բրէմանսոյի կուսակիցք, Միապետականաց հետ դաշնակցելով բուէարկութեան մէջ, կրնան տապալել չափաւոր հանրապետական Նախարարութիւնները, նոյն զէնքը Զափաւորը եւս կրնան գործածել Արմատականաց դէմ. Այս կը նշանակէ թէ Ֆրանսա տակաւին հեռի է Նախարարական և կառավարական կայուն վիճակ մ'ընդունելէ. Բայց երբ տարի մը միայն Ճնացած է 1789 ի Ֆըրանսական Մեծ Յեղափոխութեան հարիւրամեակը տօնելու, Ֆրանսայի բարեկամք անչուշտ կը փափաքին որ հանրապետական վարչութիւնը նոյն առթիւ կարենայ ապացուցանել իւր տեւականութիւն և հաստատութիւն.

Պ. Քառնոյի ընտրութենէն ի վեր, իւր գերդատանին և մանաւանդ իւր պապուն վերաբերեալ պատմական ծանօթութիւնը իրարու կը յաջորդեն Ֆրանսական մամլոյն մէջ.

Աւասիկ Պ. Քառնոյի պապուն՝ Կոմս Քառնոյի՝ հայրենասիրական մէկ երեւելի գործը, զոր Ժէրոմ Նաբոլէոն Իշխան մօտերս հրատարակած Ն-ԷՐԵՆ ԵՒ ԷՐ ՀԱՅՐԵՆԻՔ անուն գրքին մէջ կը պատմէր.

Կոմս Քառնօ պախարական էր Պոնապարդի հակահանրապետական ընթացքն և Կայսրութեան հաստատումն. Ուստի, բոլորովին մեկուսի կեցաւ Պոնապարդէ՝ Նորա փայլուն օրերուն մէջ. Բայց երբ Պոնապարդի դէմ կազմեալ եւրոպական դաշնակցութիւնն յաղթական հանդիսանալ սկսաւ, և Ֆրանսայի առաջին Կայսրութիւնը խորտակման մօտ կ'երեւէր, Կոմս Քառնօ հետեւեալ նամակը գրեց առ Պոնապարդ.

«Վեհափառ Տէր,

«Ցորչափ յաջողութեամբ պսակեցան ձեր ձեռնարկութիւնք, զգուշացայ Ձեր Վեհափառութեան առաջարկելէ իմ ծառայութիւններս, որք չէի կարծեր թէ հաճոյ լինէին ձեզ. Բայց այսօր, երբ դժբախտութիւնը մեծ փորձութեան կ'ենթարկէ զձեզ, ո՛չ ևս կը վարանիմ ձեզ նուիրել իմ տկար ոյժերս. Դուք գնաքեալ բան մ'է, արդարեւ, վաթանաւեալ բաղկի մը ճիգը. Բայց խորհեցայ թէ իւր հայրենասիրական զգացմամբ ծանօթ նախկին զինուորի մը օրինակէն քաջալերուելով շատեր եւս կրնան յարել ձեր արժիւներուն.» ԲԱՌՆՕ

Այս նամակս վրայ, Անվերսի պաշտպանութիւնն յանձնուեցաւ զօրավար Կոմս Քառնոյի, որ մինչեւ վերջը դիւցազնաբար պաշտպանեց այդ կարեւոր դիրքը, և նաբոլէոն Ա. Կայսեր անձնատուութենէն ետքը միայն յանձնեց զայն. Ալեքսանդր, Շուէյտի գահաժառանգ իշխանն, (Շուէյտի արդի թագաւորին պապն,) որ Պոնապարդի ծառայութիւնը թողով անոր թշնամեաց կողմն անցած էր, ուղեց բանակցիլ Անվերսի պաշտպանին հետ, Քառնօ պատասխանեց. «Բարեկամն էի Ֆրանսացի Պէրնատոդ զօրավարին. բայց այժմ թշնամին եմ այն օտարացեալ իշխանին որ իւր զէնքը կը դարձնէ իմ հայրենեացս դէմ.»

Պ. Պլովիճ կը հեռագրէ Նախագահ Պ. Քառնոյի նկատմամբ.

«Պ. Քառնօ ընաւ արմատական կուսակցութիւր չունի. Կեդրոնական ձախակողմի ներկայացուցիչ է. մեքենայութենէ կամ կողմնակցութենէ անմասն է բոլորովին. սքանչելի Նախագահ մ'է, ցորչափ իւր պաշտօնն է միացնել հանրապետական խմբակները. Բաց ասա, ամեն Նախագահ՝ ընտրուած ատեն՝ պատրաստ ածական մը պէտք է ունենայ, և Պ. Քառնօ կը կատարէ այս պայմանս ալ.

Թիէր ֆարդ էր (habile).

Մարէշալ Մաք-Մահոն՝ ֆալ (brave).

Պ. Կրէվի՝ անթէկրը (intègre). Պ. Կրէվիի անկումն սկսաւ երբ այս ածական իրեն չյարմարիլ սկսաւ.

Արդ, Պ. Քառնօ պոնէթ է (honnête), և հիմա ճշդիւ պարկեշտ Նախագահ մը կը փնտռուի էլիզէի պալատը մաքրելու համար.

Ժիւլ Ֆէրրի անրժը է (énergique), եւ հիմակ այս ձիրքս չուզուիր. Ասկէ ետքը կրնայ ուզուիլ. զի Պ. Ֆէրրի կանգուն կը մնայ, եւ ժամանակն իւր կողմն ունի.

Պ. տը Ֆրէսինէ նէֆէտ (fin) տիտրոսն ունի, և այս ձիրքս ալ հիմա խնդրող չկայ, մանաւանդ զի Պ. տը Ֆրէսինէ անգր բան զլանն նրբամտութեամբ գործեց, և յաջորդ պատեցուց Օրինակի համար. Պ. տը Ֆրէսինէ իւր ընտրողաց գիւրութեան համար իւր անունը տպել տուած էր, եւ տպագրեալ քուէթուղթերն ինձ ցոյց տրուեցան. Իւր անուն երեք տարբեր կերպով գրել տուած է Պ. տը Ֆրէսինէ. Քուէթուղթերէն ոմանց վրայ պարզապէս Ֆրէսինէ գրուած էր, Արմատականներուն համար. որք տիտրոս չեն սիրեր. Տը Ֆրէսինէ գրուած էր Հանրապետականաց միջին դասուն համար, իսկ Պ. Տը Ֆրէսինէ՝ ազնուապետականաց համար. Ամեն ոք կը ծիծաղէր այս բուէթղթոց վրայ.»

Պ. տը Ֆրէսինէի ընտրուելու համար բրած ճգանց վրայ եւս Պ. տը Պլովիճ հետեւեալը կը հեռագրէ.

«Այս մարդ որ հիւանդոտ կը կարծուէր, ամենայն փութաջանութեամբ կաշխատէր ընտրուելու համար. Օգէլ տէ Ռէզերվուառ պանդոկին մէջ, ուր Վեհաժողովոյ հարիւրաւոր անդամք կը վազէին ցորեկուան ճաշուն համար սեղան մը կամ սեղանի ծայր մ'ունենալու, Պ. տը Ֆրէսինէ կը ճաշէր. Դրան քով սեղան մը նստած էր. Մտնող ելնող ամեն ոք այս խիզախ ընտրելույս առջեւէն կ'անցնէր, որ ամենուն հետ կը խօսէր ի չառաջադիմութիւն իւր ընտրութեան. Բարեկամներէս մին՝ Երեսփոխան կարծելով՝ խօսքի բռնեց, և ըսաւ. «Կը յուսամ թէ ինձ կուտաք «ձեր քուէն. Միակ մարդն եմ որ կը բռնեմ հանդարտեցնել հասարակաց «միտքն, և հաշտեցնել հանրապետական բաժանեալ կուսակցութիւնն.» «Անշուշտ», պատասխանեց բարեկամս. «բայց Երեսփոխան չեմ, քուէ չունիմ.» «Լաւ, պատասխանեց Պ. տը Ֆրէսինէ.» Եթէ Երեսփոխան բարեկամ ունիք, ըսէք անոնց ինչ որ ըսի ձեզ, որպէս զի ժամանակս պարապ վատնած չըլլամ». Զայս ըսելով, ուրիշի մը քով վազեց Պ. տը Ֆրէսինէ.

«Ժողովատեղին երթալով, տեսայ որ սրահին առջեւ կը պտրտեր հաւաչափ քայլերով, ամենուն ծիծաղելով. Լիայոյս էր այս արտասովոր մարդ. Մէկէն հինգ վեց մարդու հետ խօսքի կը բռնուէր, թախանձելով որ իրեն քուէ տան, և զանոնք կը թողուր ուրիշ հինգ-վեց մարդոց քով նոյն չատագովութիւնն ընելու. Այսպէս կը պտրտէր ամեն կողմ, աչքէն բնաւ չվրիպեցնելով զանոնք որոց քուէն չտիրլ կը յուսար. Փոյթ չէր ըներ զանազանելու Ա-ջակողմ կամ Զախակողմ, Կեդրոն կամ Մարքսիստ.—Ճարտար բառով մը ամենուն ալ քուէն կորզել կը ջանար.

«Եւ ի՞նչ յուսավրիպում երբ՝ յետ ա՛նչափ աշխատանաց՝ Պ. տը Ֆրէսինէ 76 քուէ միայն չահեցաւ. Ասոնք որ այս գերդատն վայրկենիս տեսան զնա՝ բնաւ չպիտի փորձուին Նախագահութեան Ընտրելի հանդիսանալ. Մրպիսի երաշներ ցրեցան. Օտարազգի դիւանագէտ մը կը պատմէ ինձ թէ ի՞նչպէս Պ. տը Ֆրէսինէ, ստոյգ համարելով զիւր ընտրութիւն, նկարած էր էլիզէի վիճակն իւր իշխանութեան ներքև. «Պատկերն ա՛նչափ հմայիչ էր, որ ես ևս սկսայ երազել իրեն հետ, և իրեն պէս անոյշ երազէ մը արթնցածի պէս եղայ.» Ճշմարտութիւնն այս է թէ Պ. տը Ֆրէսինէ ամեն ժամանակ ընտրելի մ'եղած էր Նախագահութեան քան Նախարարապետ, և ա՛յս պատճառաւ է որ հանրապետական ամեն կուսակցութեանց զիչում կ'ընէր յաջորդաբար, կանխաւ ապահովելու համար յաջողութիւն մը որ այնչափ անդիմադրելի պիտի զլացուէր իրեն. Առաջին քուէարկութենէն յետոյ, տեսնելով իւր յոյսերուն ի դերեւ ելնելը, Պ. տը Ֆրէսինէ վերստին Վեհաժողովոյ սրահէն անցաւ, ընտրելութենէն հրաժարելով ի նպաստ Պ. Սատի Քառնոյի. Իւր վրայ դիտուած փոփոխումն ուշագրաւ էր. ո՛չ ևս մարդ կը փնտռէր խօսակցելու.»

Իւր աներոջ անկման աղմուկին մէջ, Պ. Վիլսոն մոռցուեցաւ. Բայց «Դայթակղութեանց Ցանձնաժողովը» չաւարտեց իւր աշխատութիւն. Պ. Վիլսոնի գործն Ամբաստանիչ Ատենին առջեւ է, որ կ'ըսուի թէ, Պ. Վիլսոնի յանցաւորութեան բարոյապէս համոզուած, բայց օրինական ապացոյցները բաւական չի համարիր՝ Եղեռնական Ատենին առջեւ զրկելու համար զնա. Ըստ ամենայն հաւանականութեան, Պ. Վիլսոն անպարտ պիտի արձակուի. Բայց արդէն բաւական պատժուած չէ՞ կրրնա՞ր աւելի խիստ պատիժ մը կրել բանզան բարոյական թշուառութիւն յորում թաղուած է այժմ, եւ ուստից չպիտի կրնայ ելնել՝ օրինապէս անպարտ արձակուելով անգամ.

ՄԱՄԼՈՑ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի վրայ մեր անցեալ աւուր քաղաքական յօդուածին մէջ, «մամլոյ ազատութեան բարիքները կ'անարկէինք.

Մէսչէրսքի Իշխանին ի Բեգերսպուրկ հրատարակած Կլաշդանին անուն կարեւոր օրաթերթին մէկ վերջին թերթով հետեւեալ հետաքրքրաշարժ եւ զուարճալի հատուածն հրատարակուած է.

«Այսօր չկրցանք հրատարակել մեր «Թղթակիցներէն եկած հեռագրաց ո՛չ «մին. զի Դրաքննիչն, որուն հեռագիրք «կը զրկուին ի քննութիւն, երէկ իրի «կուն տուր չէր, մինչեւ կէս գի«շերէն յետոյ ժամ 2.»

Թ-ՇՂԻՆ Վիէննայի Թղթակիցն այս մասին հետեւեալ հեգնական դիտողութիւնը կ'ընէ.

«Իւր պարտաւորութեանց այս ու«շադիր և խղճամիտ եղանակաւ կա«տարման համար, Դրաքննիչն անուշտ «պիտի վարձատրուի Թոշակի յաւել«ամբ մը և առաջին կարգի Սգանիշ«լասի պատուանշանաւ.»

Շնորհիւ ազատութեան զոր կը վայելենք մեր Օգոստ. Վեհապետին Սուլթան Ապտուլ-Համիտ Կայսեր իշխանութեան ներքեւ, լրագրական սեղմումներու այս ծարաւեղութիւնը անլուր են Թուրքիոյ համար. Այդ ազատութեան շնորհիւ է որ լրագրութիւնը կարող կը լինի շատ անգամ օգնական ծառայութիւններ մատուցանել կայսկառավարութեան, եւ այդ ազատութեան շնորհիւ լիայոյս ենք թէ՝ ինչպէս անցեալին՝ ապագային մէջ եւս Լրագրութիւնը կարեւոր ծառայութիւններ պիտի մատուցանէ մեր սիրելի երկրին, ըստ բաղձանաց մեր յառաջդիմասէր Վեհապետին.

ՊՕՇՆԱՖԷՆԵՐՈՒՆ ԲՈՂՈՔԸ

Պ-ՆԷՆԷ Փ-Ռ-Ռ անուն կառավարական լրագիրն Պոսնայի՝ վերջերս նամակ մը հրատարակեց, որ յիշեցնելով թէ առաջիկայ տարւոյ օգոստին կը լրանայ Պոսնա-Հերսէքի աւստրիական գրաւման տասնամեակն, հրաւէր կը կարդայ բնակիչներուն՝ հանդիսաւոր ցոյցով մը արտայայտել իրենց երախտագիտութիւն առ Ֆրանց Եօզէֆ Կայսեր կառավարութիւնն, ի Պոսնա-Սէրայ կազմակերպելով երկրին բերքերուն մէկ ազգային ցուցահանդէս.

Այս կէս պաշտօնական հրաւէրին թիւն, երկրէս հեռաւորութիւնը, ծառայը, անջրպետին մէջ իրենց թաւական օրէնքներն, արեգակներէն յետոյ նկարագրելով մոլորակներն, և խօսելով նոքանէն ատեղ վրայ, ոչատակէն յետոյ զառամած աշխարհները, մեռած աշխարհներ. Անոնք անցայ երկնային գնդոց ընակելութեան, և երկրագնդոս օրինակին յենելով, հակիրճ բանիւք պատմեցի թէ ինչ յաջողական չրջաններով երկրագունս, կազային վիճակէն հեզուկ վիճակի անցնելով, յետոյ թեթեւ կեզուով մը չրջապատուելով, վերջապէս ծածկուեցաւ բոյսերով. Անուշհետեւ ցոյց տուի կենաց առաջին երեւումն երկրագնդոս վրայ, յետոյ նկարագրեցի հողին ուռուցուներն, հրաբխային ցնցումները, տրէն վեր բարձրացող ցամաքներն. և յայնժամ ուրուագրեցի էակաց շղթայման սկզբունքը, մինմանց յաջորդութիւնն բնութեան յամրու յարատեւ ճգամբ որ կատարելագործութիւնէ ի կատարելագործութիւն կ'երթայ միշտ. Ցամ մը բաւ եղած էր արագ յանպարտասից բանախօսութեան մը մէջ կեդրոնացնելու համար Կալիլէոսի, Կոպէրնիկի, Գէքելերի, Նեւոտնի, Լաբլասի գիւտերը. Նոյնչափ ժամանակ բաւ եղաւ ինձ աչքէ անցուցնելու համար Ժոֆրուա Սէնդ-Իլէռ, Լամարքի, Լիէլի, Ֆոկլի, Տարուինի աշխատութիւնները. Բարեբաղդաբար կրցայ հասկցնել ինքզինքս եւ ունկնդրիս հետաքրքրութիւնը չարժել. Իրեն առջեւ պարզած անհուն պատկերս այնքան նոր էր յաչս իւր որ անձայն անխօսուկ մտիկ կ'ընէր ինձ. Բոլոր այն գաղափարները զոր կազմած էր, կամ մտաւանդ մանկութեանն ատեն ստացած էր ուսուցիչներէ որոց ուշին չէր դներ, հիմնիվերո տապալած էին Մարդկային ցեղին վարանի ծագումն եւ հեռութիւնն հասուցած էին զիս նիւթիս նպատակին, այսինքն Ուրժէլի վեմը խուզարկող դիտանոն հետազօտութեանց. Երբ անդ հասայ, այնպէս կեղծեցի թէ կոմսուհւոյն հետաքրքրութիւնը լիովին գոհացուած էր եւ կանգ առի.

Այլ նա այսպէս չէր ուզեր.

—Ցետոյ, ըսաւ.

Ինձ կը նայէր քարի մը խօսիլը լսող մարդու մը զարմացմամբ. Հարիւր ասփիճան բարձրացած էի իւր մտաց մէջ.

Ցայնժամ, յաջողութենէս քաջալերեալ—սիրոս լցուած էր յաղթանակս—ուրուագրեցի մարդկութեան պատմութեան յաջորդայոյզ, թէպէտ յար սրատմրմոք պատմութիւնը. Ներկայացուցի զնա մինչ իւր առաջին քայլերը կ'առնուր աշխարհիցքիմաստասիրութեան վրայ անչխանութեամբ, բընութեամբ, հազար աւելորդապաշտութեամբք, որք, իրենց առարկայն փոխելով հանդերձ, յաւիտենական պիտի մնայն գարձեալ. Ըսի յարատեւ կրկնութիւնն միեւնոյն պատճառաց որք անփոփոխելի կերպով յառաջ կը բերեն մի և նոյն արդիւնքները. միակ անհատի մը փառասիրութեամբ կանգնած կայսրութիւնը որք հեղգենէ կ'ընդարձակեն իրենց սահմանները և վերջապէս մին միւսին ետեւէն կը կորսուին՝ արշաւանաց սկզբունքին ծայրայեղութեամբ.

(Շարունակելի)

—)(13)(—

ԲՍՐՔՕՆԱՐԵՒԵԼՔԻ

ԷՌՆԷՍԴ ՖԷՏՕ

ՇԱԼԻ ԿՈՄՍՈՒՀԻՆ

Կոմսուհին շատ մտացի էր, իրաց հեւաքրքրութիւնն եւ զգացումն ունէր, այլ իւր կերթութիւնն թերի էր յոյժ. Չ'մէկ ճիշդ գաղափար իւր մտաւորական պարարն ամբողջովին կը յենուր ընկերական նախապաշարմանց վրայ. Ինքզինքը կը կառավարէր իւր զգայնութեամբք, և ոչ բնաւ խորհրդածութեամբ. Կը ցանէի մանաւանդ որ երբէք չէր կարդար. Այս մասին հարցափորձեցի զինքն. բաւ թէ բնաւ գիրք չունէր քովը; Ոչ միայն ամենազգոյն ծանօթութիւն չունէր գիտութեանց վրայ, այլ մարդկային մտաց հրաշակերտները, մինչեւ իսկ անոնք որք մասնաւորապէս կանանց համար գրուած կը թուին, հոգեւ գիտէր անոնց անունները. Լա Կոդէր ոք ղէրոանէ, Լա վէ բաւիդէն, զորս կ'ընդունէր յէջս, ասաւի՛ւ իւր գրականութիւնը... Մերթ կը խօսէր ինձ թատրոններուն վրայ. հարցուցի իրեն թէ ո՞ր թատրոնները կը յաճախէր. Պատասխանեց թէ Օրէյան եւ Իպալիէնը կ'երթայ մարդ տեսնելու համար, այլ թէ զոսնելու համար չատ ու չատ նախամեծար կը համարէր Վաուիէդէն, Բալ-Ռուայյալը, Պուֆ-Բառիդիէնը. Այսպէս, այդ կինն որ ճաշին օրէնք կը դառնար երկրագնդս առաջին քաղաքին մէջ. որ արդուզարդերը, գոհարեղէններն, սպասաւորները, կարասիները կրնային յիշատակուիլ իւր օրինակ. այդ կինը, թագուհի իւր դերեցկութեամբ, հրապոյրով, ձեւերով, վայելչութեամբ, իւր մտաց համար ուրիշ ճարակ չէր փնտռեր բայց եթէ Լա Պել Էլէնի քարուկանդը (turpitude) եւ Պլէ էֆ ա՝ավանի անմտութիւնները.

Լ.Դ

—Կարդալու ժամանակ ունիմ, պատասխանեց իմ դիտողութեանցս.

Եւ որովհետեւ չէի համաձայներ բան մ'ըսել՝ իւր խիզախ համարձակութենէն գինովցուելու, չարունակեց ծաղրածու դէմքով մը որու տակ յայտնի կը տեսնուէր ներքին դժգոհութիւն մը.

—Արդի ժամանակաց մէջ, կանայք միակ պարտաւորութիւն մ'ունին հանդէպ ընկերութեան. ՀԱՃՈՅԱՆԱՑԱ... Երբ առաջին անգամ հանդիպեցաք ինձ, հարցուցիք փնտռեցիք թէ ինչ արժանիք ունի. Ո՛չ. Դեղեցիկ երեւցայ ձեզ. տեսաք որ ամեն ոք կը չրջապատէր զիս. ձեզ ըսին որ մին էի այն երեք չորս կիներէն որոց նորաձեւութիւններն, զգեստներն, ապրելաձեւերն կ'ընդունիկէ բամբոլ եւրոպա. Այս բան խանդավառեց զձեզ. Պաշտեցիք զիս, տակաւին կը պաշտէք. Եթէ ձեզ պէս երիտասարդ տեղեկութիւններ ունենայի չատ մը բաներու վրայ, աւելի՞ պիտի սիրէիք զիս. Դուք ուսուցիչէ՞ էք, լա՞ւ.

(*) Ֆրանսերէն pédant բառն, որ գործածուած է բնագրին մէջ, ամենայն ոգիմանելի է սատ. զի կը նշանակէ միանգամայն թէ՝ մանկանց ուսուցիչ (արհամարհանօք) և թէ՝ ամենէն դիպուն բաներու մէջ անդամ ճշդապահ, կարի ճշդապահանդ. Ս. Թ.

Նայեցէք որ pédant (*) չըլլաք, սիրելիս.

Դարձեալ բան մը չըսի, լրաւունք ուզեցէք. Խորհեցայ թէ Դիտիան իշխանին նման մարդոց ընկերակցութիւնը չէ՛ր որ պիտի կրնար փոխել տալ այսպիսի գաղափարներ. Այդ թեթեւսօրեայ սպրիկին ի՞նչ բանի վրայ կրնար խօսիլ իւր տարփուհւոյն հետ. Այլ ամենայն. ի՞նչպէս նա որ իւր կեանքն անխղճի կապերով զօդած էր նորա կենաց, որ կերպիւ իւրք պատասխանատու էր նորա գաղափարաց եւ ընթացքին ուղղութեան, չէր փորձած այն փորձն զոր ես, նորա տարիքաւոր, կ'ուզէի ընել.

Խորհեցայ յայնժամ թէ լաւ վարուած չէի կոմսուհւոյն հետ, եւ սպասեցի որ պարզապէս մը առթի տայ ինձ հանելու այն նպատակին զոր կը բաղձայի ի կատար հանել.

Լ.Ե

Այս պարզապէս ներկայացաւ ամենէն անակնկալ եղանակաւ, զիտնայ մ'առթիւ որ քիչ էր մնացած խեղդուէր Պուռժէի լճին ափունքը խուզարկած առեն անդ գտնելու համար լճային բնակարանց փլատակներ. Քաղաքին մէջ ամեն ոք կը խօսէր այս պատահարին եւ հետեւաբար զիտնոյն հետազօտութեանց վրայ. Լուրը բնականարար հասաւ մինչեւ կոմսուհւոյն ականջն. Որովհետեւ բան մը չէր հանիար այս խօսակցութեան առարկայէն, եւ որովհետեւ բան գործ չանէր, իրմէնուն մը երբ մէկ միայնակ կը չրջապտէինք, խնդրեց ինձմէ բացատրել թէ «ինչ կը նշանակէր այս» Փորձառութենէս օգտուելով, զնա գոհացնելու սխալը չգործեցի, այլ, ուզելով իւր հետաքրքրութիւնը չարժել, տարտամ անհանգիստի պատասխան մը տուի նմա: Անմիջապէս ինկաւ լարած ծուղակիս մէջ: Ցայնժամ, իւր հետաքրքրութիւնը զրգռելու համար, ըսի թէ բոլոր գիտութիւնք իրարու հետ առնչութիւն ունէին. Թէ անհնար էր ամենաղոյզն ծանօթութիւն մը տալ միայն վրայ առանց խօսելու միւսներուն վրայ. Թէ նախաշաւիղ մը կար ամեն բանի մէջ, թէ նախաշաւիղք չատ չար էին, եւ կրնային հեռուն տանիլ, թերեւս ճանաչցնել զմեզ.

—Զիս անխելքի տե՞ղ կը դնէք, պատասխանեց տիկին ազ Շալի. Հիմա կը պահանջեմ որ ինձ հասկցնէք այս ընդհանուր խօսակցութեան նիւթը.

Ցայնժամ... կոցուիթիւնը թերեւս ծպրելի պիտի ըլլար, եթէ իւր սրատաչափ կողմերը չ'ուներեր, յայնժամ հրաւէր կարգացի այն բոլոր խնացական ձիրքերուն որովք բնութիւնն օժտած էր զիս, եւ մասս դնել երկինք բարձրացնելով՝ սկսայ կարելի եղածին չափ բացորոշ լեզուաւ մը մարդկութիւնն յուզած ահեղ խնդիրները բացատրել այդ մանկամարդ գնդական կնոջ, որ ա՛նքան նեղանալու էր, որում անհամ ուշադրութեանց վրայ միայն խօսած էին: Նոյնպէս պարզել աշխարհաց հաւասարակշռութեան պատմութիւնն: Ըսի անոնց թէ, Պ. Վիլսոնի յանցաւորութեան բարոյապէս համոզուած, բայց օրինական ապացոյցները բաւական չի համարիր՝ Եղեռնական Ատենին առջեւ զրկելու համար զնա. Ըստ ամենայն հաւանականութեան, Պ. Վիլսոն անպարտ պիտի արձակուի. Բայց արդէն բաւական պատժուած չէ՞ կրրնա՞ր աւելի խիստ պատիժ մը կրել բանզան բարոյական թշուառութիւն յորում թաղուած է այժմ, եւ ուստից չպիտի կրնայ ելնել՝ օրինապէս անպարտ արձակուելով անգամ.

ՄԱՄԼՈՑ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Ֆրանսայի վրայ մեր անցեալ աւուր քաղաքական յօդուածին մէջ, «մամլոյ ազատութեան բարիքները կ'անարկէինք.

Մէսչէրսքի Իշխանին ի Բեգերսպուրկ հրատարակած Կլաշդանին անուն կարեւոր օրաթերթին մէկ վերջին թերթով հետեւեալ հետաքրքրաշարժ եւ զուարճալի հատուածն հրատարակուած է.

«Այսօր չկրցանք հրատարակել մեր «Թղթակիցներէն եկած հեռագրաց ո՛չ «մին. զի Դրաքննիչն, որուն հեռագիրք «կը զրկուին ի քննութիւն, երէկ իրի«կուն տուր չէր, մինչեւ կէս գի«շերէն յետոյ ժամ 2.»

Թ-ՇՂԻՆ Վիէննայի Թղթակիցն այս մասին հետեւեալ հեգնական դիտողութիւնը կ'ընէ.

«Իւր պարտաւորութեանց այս ու«շադիր և խղճամիտ եղանակաւ կա«տարման համար, Դրաքննիչն անուշտ «պիտի վարձատրուի Թոշակի յաւել«ամբ մը և առաջին կարգի Սգանիշ«լասի պատուանշանաւ.»

Շնորհիւ ազատութեան զոր կը վայելենք մեր Օգոստ. Վեհապետին Սուլթան Ապտուլ-Համիտ Կայսեր իշխանութեան ներքեւ, լրագրական սեղմումներու այս ծարաւեղութիւնը անլուր են Թուրքիոյ համար. Այդ ազատութեան շնորհիւ է որ լրագրութիւնը կարող կը լինի շատ անգամ օգնական ծառայութիւններ մատուցանել կայսկառավարութեան, եւ այդ ազատութեան շնորհիւ լիայոյս ենք թէ՝ ինչպէս անցեալին՝ ապագային մէջ եւս Լրագրութիւնը կարեւոր ծառայութիւններ պիտի մատուցանէ մեր սիրելի երկրին, ըստ բաղձանաց մեր յառաջդիմասէր Վեհապետին.

ՊՕՇՆԱՖԷՆԵՐՈՒՆ ԲՈՂՈՔԸ

Պ-ՆԷՆԷ Փ-Ռ-Ռ անուն կառավարական լրագիրն Պոսնայի՝ վերջերս նամակ մը հրատարակեց, որ յիշեցնելով թէ առաջիկայ տարւոյ օգոստին կը լրանայ Պոսնա-Հերսէքի աւստրիական գրաւման տասնամեակն, հրաւէր կը կարդայ բնակիչներուն՝ հանդիսաւոր ցոյցով մը արտայայտել իրենց երախտագիտութիւն առ Ֆրանց Եօզէֆ Կայսեր կառավարութիւնն, ի Պոսնա-Սէրայ կազմակերպելով երկրին բերքերուն մէկ ազգային ցուցահանդէս.

Այս կէս պաշտօնական հրաւէրին ատեն ստացած էր ուսուցիչներէ որոց ունկն չէր դներ, հիմնիվերո տապալած էին Մարդկային ցեղին վարանի ծագումն եւ հեռութիւնն հասուցած էին զիս նիւթիս նպատակին, այսինքն Ուրժէլի վեմը խուզարկող դիտանոն հետազօտութեանց: Երբ անդ հասայ, այնպէս կեղծեցի թէ կոմսուհւոյն հետաքրքրութիւնը լիովին գոհացուած էր եւ կանգ առի.

Այլ նա այսպէս չէր ուզեր.

—Ցետոյ, ըսաւ.

Ինձ կը նայէր քարի մը խօսիլը լսող մարդու մը զարմացմամբ. Հարիւր ասփիճան բարձրացած էի իւր մտաց մէջ.

Ցայնժամ, յաջողութենէս քաջալերեալ—սիրոս լցուած էր յաղթանակս—ուրուագրեցի մարդկութեան պատմութեան յաջորդայոյզ, թէպէտ յար սրատմրմոք պատմութիւնը. Ներկայացուցի զնա մինչ իւր առաջին քայլերը կ'առնուր աշխարհիցքիմաստասիրութեան վրայ անչխանութեամբ, բընութեամբ, հազար աւելորդապաշտութեամբք, որք, իրենց առարկայն փոխելով հանդերձ, յաւիտենական պիտի մնայն գարձեալ. Ըսի յարատեւ կրկնութիւնն միեւնոյն պատճառաց որք անփոփոխելի կերպով յառաջ կը բերեն մի և նոյն արդիւնքները. միակ անհատի մը փառասիրութեամբ կանգնած կայսրութիւնը որք հեղգենէ կ

մը յառաջ բերած լինիլ կը թուի Աւստրիոյ-Հունգարիոյ կառավարական ակմբոց մէջ։ Կառավարական Բիւշէէ Լէյտ պուլկարական խնդրոյն վրայ դեկտ. 10 թուով հրատարակած մէկ ուշագրաւ յօդուածին մէջ կ'ըսէ թէ «Ռուսիա համոզուած պէտք է լինի որ Եւրոպա՝ խաղաղութեան պահպանման փափաքելուն պատճառաւ՝ ընդարձակոյն զոհողութիւններ պատրաստ է ընել Ռուսիոյ՝ պուլկարական խնդրոյն մէջ»։ «Եւրոպա» կը նշանակէ պարզապէս Աւստրիա Հունգարիա։ Զի Զարին հետ իւր վերջին տեսակցութենէն ի վեր, Պիզմարք Իշխան պուլկարական խնդրոյն մէջ ռուս քաղաքականութեան արգելք մը յարուցանելու միտում չունի բնաւ, և Անգլիա նոյն խնդրոյ մէջ Աւստրիոյ ընթացքին հետեւող է, իր մէջ աւելի շահակից համարելով զնա։ Հետեւապէս, կ'ըսուի թէ Վիէննայի կառավարութիւնը, Ռուսիոյ հետ պատերազմի չբռնուելու համար, պատրաստ է զոհել Թերմինամ Իշխանն որոյ դիրքը դարձեալ խախուտ կ'երևի։

ԱՆԳԼԻՈՅ Թագուհին Հնդկաստանի Աստեղ պատուանշանին Ասպետութեան աստիճանը տուաւ Պարսկաստանի Դահճառանգ Զըլլ իս-Սուլթանին, «կուսակալ Սպահանու, Ֆարսի, Արապիստանի, Քիւրտիստանի, Եզդի, ևն»։

—Ի նպաստ «Սուրիոյ վարժարանաց», Էտիմպուրկի մէջ պաղաբ մը կազմակերպեցաւ, որ բացան առաջին օրն 200 անգլ. ոսկի հասոյթ արտադրեց։

Ռուս իշխանուհին Շեռմոտովի, որ Ճիներվրայէ կուգար Մոսքուա վերադառնալու համար, Օֆիցպէնի կայարանին մօտ իւր կառքին դուռը բացաւ և ճարուն վրայ նետուեց ինքզինք, անձնասպանութեան դիտաւորութեամբ։ Շատ ծանրապէս վիրաւորեցաւ։ Կ'ըսուի թէ ինքնասպան լինել որոշած էր, զի իւր այր խելագարած է։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

Կրօնական ժողովն իւր երէկի արտասովոր նստին մէջ, որ տեղի ունեցաւ ատենապետութեամբ Դեր. Դիմաքսեան Հմայեակ եպիսկոպոսի, խորհրդակցեցաւ Պարիզաբնակ խնդրոյն վրայ։ Այս գումարման ներկայ գրտնուեցաւ նաեւ Դեր. Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ, Դեր. Արիստակէս եպիսկոպոս Դերձակեան և Դեր. Տիմոթէոս եպիսկոպոս Սաիրէչեան։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Ըստ որոշման Կրօն. ժողովոյ, եկեղեցական պատգամաւորութիւն մը, զոր կը կազմեն Դեր. Հմայեակ եպիսկոպոս Դիմաքսեան, Պարիզաբնակ Փոխանորդ Դեր. Դէորգ Ծ. վարդապետ Իւթիւճեան և Արժ. Ներսէս վարդապետ Արսլանեան՝ ընկերակցութեամբ Պարիզաբնակ գործակատար Ֆրէկեան Մեծ. Աբրահամ էֆէնտիի՝ այսօր կը ներկայանայ Բարձր. Մեծ-եպարքոսին։ Պատգամաւորութիւնը, պարզելով Ազգ. Պարիզաբնակաց անհիւսնական վիճակն և ազգային գործոց անկերպարան կացութիւնը, պիտի խնդրէ Ն. Բարձրութենէն որ չնորհնէ պէտք եղած հրամանները տալ փոխանցելու համար պարիզաբնակ խնդրոյն կարգադրութիւնը։

ՁՄԻՌՆԻՈՅ ԱՌԱՋՆՈՐԴՆ

Երէկ Ֆ-ի մէկ հեռագիրն արտասպած էինք որ կը ծանուցանէր թէ այս կիրակի օր Զմիւռնիոյ Հայոց եկեղեցւոյն մէջ աղմկալից ցոյցեր տեղի ունեցեր են տեղւոյն Ս. Առաջնորդին դէմ։

Այս դէպքին առթիւ հեռագիր մ'եւս ի Պարիզաբնակաց հասած է։

Վիէնտիկի Մխիթարեանց Աբբահայր Դեր. Իգնատիոս Ալբեպիսկոպոս այս երեկոյ մայրաքաղաքէս կը մեկնի ի Պրինտզի, ուսկից ուղղակի Հռոմ պիտի երթայ։

Պոլսոյ թաղերէն մէկն մէջ անցեալ օր տղայ մը կը մեռնի տարափոխիկ հիւանդութենէ մը, թաղին վարժարանի աշակերտները կը տարուին ի յուշարկաւորութիւն և մինչեւ իսկ մեռեալ մանկան դագաղը նոյն տղայոց վերցնել տալ կ'ուզեն իրը ի պատիւ, և այսպէս դպրոցական տղայոց ամբողջ օրն ի զուր վատնելէ վերջ նոցա կեանքն ալ վտանգի կենթարկեն, բայց բարեբաղդաբար տեղւոյն թաղապետական բժիշկը կ'արգելու. ոչ միայն դագաղն վերցնել այլ և անոր մօտենալն իսկ Ազգ. Կրթական Տեսչութիւնն իմանալով զայս իրողութիւն, որոշեց յիշեալ Թաղ Խորհրդոյն ապ ալարագիրդրիել և պատասխանատու ճանչնալ նաեւ վարժարանաց տեսուչներն ու դասախօսները։ Մինչդեռ այն տեղեկագիր մը ժամոյց երէկ առ Կրօնական ժողովն և խնդրեց որ քահանայից պատուէր արուի, որպէս զի նոքա եւս զգուշանան դպրոցական տղայք տանելէ ի հանդէս յուշարկաւորութեան և հարանեաց։

Կրօնական ժողովն, բան առաջարկութեան Կրթական Տեսչութեան, որոշեց տրմարերակատաս մը վերստին ծանուցանել Խառն ժողովոյ այն որոշումն որով արգէն արգիլուած է դպրոցական տղայոց ներկայ գտնուիլ յուշարկաւորութեան հանդէսներու։

Երէկ հաղորդեցինք Պ. Ռափայէլ Պատկանեանի Աշչէֆտի մէջ տուած լուրն ի մասին Երուսաղէմայ կոսակալ մեծագումար հարստութեան մը։ Ասուսկ Ոխրատոր նամակաց այն մասն որ կը վերաբերի այս գործին։ Ի հարկէ այս լուրն որչափ ալ ուրախաւէտ է, այնքան ալ տարօրինակ կը թուի։ Հաւանական է որ Երուսաղէմատուրը մեկնէ գործին էութիւնը։

Օրէս չորս տարի առաջ հայազգի քաղաքներից մէնի մէջ Բաւ դրէս Դ թատրական վարդապետ, այն մեծ ազդեցիներով արտաքսուած է եղել Երուսաղէմից, Կ. Պոլսից և Էջմիածնից՝ իւր խռովարար, քննու, չարախօս բնաւորութեան և վատաշուք վարքի համար։ Նոյն քաղաքումը եղել է մի անժամանակ հարստասա այրի պառաւ կին։ Տեղացի բարի մարդիկ աշխատել են այդ պառաւի միայնը դէպի այն հակեցնել, որ նա իւր ժառանգաւոր հարստութիւնը (մօտ 250 000 մանէթ) կամէ կամ յոգատ իւր մարդոնի քաղաքին, կամ նուիրէ Էջմիածնի ճեմարանին և կամ վերջապէս ընծայէ Վանի կամ Զէյթունի աղգային վարժարանների։ Ցիշեալ չէջմոյի վարդապետը խեղճ պառաւի միայնը ու բարի դիտաւորութիւնները այսպէս յեղաշրջել է։ «Զիրա որ, ասել է, ճանրմ ճանրմ ասակիզ տաս էջմիածնին. հոնի սարտ վարդապետները այսրը կը թալանեն ու մնեռթ ասահմի մէջ նարա իպր-թօպր չը մնալ։ «Զիրայ որ Վանին և Զէյթունին տաս. աւրայը զաքիթ կ'անին։ Դուն խեղբ ունիս նը ու տատուաձանմաց բան անել կուգես նը «ե՛ա մէկ եռաբնով մարդս. ձեռքով, ե՛ա «ինքդ քու ձեռքովդ պիտի տանիս, էրուստուդեմ ն պիտի տաս էրուստալէմ որ կասեն նը՝ ան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի կեցած տեղն է հոնէ երկինքը մօտիկ է ապատարդուս։ հոն տարին մէմը «երկինքէն լուս կինէին ու քրիստոնեաներ «ձեռքերուն կերտոնները տտ լուսովը կը «վառին։ հոն ժամին պատին ականջդ դընիս նը՝ արդարներուն հոգիներուն ճաւուլ-ճաւուլ ծանները կը լսես հոնէ խունկին ծուխ, ու նայա ճուղերուն վրան «արդարները նստած են։ հոն օսկի խուցիներու մէջ պոհուած են Գարեգէր Հրեշտակապետն խանմարին փեռուրը, սուրբ «Գալուստին ու սուրբ Արաթինին հրաշագործ մասունքները . . . . . և այսպէս պատմութիւններով ցոյն տտոխման վառել բարբոքել է ոգորմելի գառատար կնոջ տիար երեսակայութիւնը, որ նա տուել է յիշեալ 250 000 մանէթը և ուզղակի գնացել է Երուսաղէմ։ Այս պատմածս 3—4 ամառայանցք է։ (Օգոստոս 7։)

Հայրենասիրէ՛ Հայերս խմանալինք ապրանքս սեւէն, օգտուէսք վաստակէն, բարին չարէն և լաւը վատէն ջոկելու՝ մինչ մեր սուրբ Էջմիածնիը և նոցա հետ միասին մեր ամէն ազգային հաստերը այս անհիմիմ, կիսակործան, թերի վիճակի մէջ կը լինէին։

Աստուած Աստուա՛ծ՝ եկ՛ր ազգային հայրենեաց վրայ պիտի դարձդ, ի խօսելու և գրելու գաղտնի բերաններ և գրիչներ։

Ծանուցինք թէ Ասիական ընկերութիւնն իրր վեց հարիւր կոտր գիրք նուիրած է Ուլնիոյ վարժարանաց։ Ասասկ այս առթիւ Պատր. Դեր. Փոխանորդ Հօր կոչվէ յիշեալ ընկերութեան Տնօրէն Ժողովոյ ատենապետ Մեծ. Յակոբ էֆէնտի Ալիսուն-Տիւրիի ուղղեալ նամակին պատճէնն, որ մեզ հաղորդուած է.

Պատարժան Խորհրդոյդ ամսոյս 23 թուականաւ և 339 համարաւ գրութիւնն, որով կը խնդրուէր Ուլնիոյ վարժարանաց համար բարենպաստակ ընկերութենէդ ըստ ներքսակեալ ցուցակի հայկազեան և հետզհետէ հայկազանի դասագրքերն յունիա հասուցանել պ չուշ ատակն մարմին մը ցոյց տալ, մեծամ գոհունակութեամբ կարգացինք. և փութացանք յանձնարարել Ուլնիոյ տարարաղդ հրիզ լոյ Պատարժան Ծանձնաժողովոյն, որպէս զի նոյն գրագրքերն հետզհետէ յուզարկելու փոխանի, որով թէ բարենպաստակ ընկերութիւնդ իւր գոսկի փափաքանաց լրումը տեսնելով ուրախ կը լայ և թէ յիշեալ տարարաղդ հրիզ ալ և իրենց խանմատեալ թշուառ գաւակունք կը մխիթարուին։

Ցուսալով որ Պատարժան Խորհուրդդ գոհ լինելով մեր այս տնորինութենէն՝ գործադրութեան մասին իսկ հարկ եղած գիւրութիւնները կընձեռէ։

Մնամք աղօթարար

Պարթաբ-ման Փոխանորդ

ԳԷՈՐԳ. Վ. ԻՒԹԻՒՃԵԱՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՀԱՅԿԵՐՈՑԹ Ի ԿԱՑՍ. ՊԱԼԱՏ

Երկուշաբթի գիշեր կայս. պալատն մէջ փառաւոր հացկերոյթ մը տրուեցաւ ի պատիւ իտալական դեսպան Պառոն Պլանի և դեսպանուհւոյն։ Սեղանին ներկայ էին նաև Բարձր. Մեծ-եպարքոսն, Վեսմ. Սայիտ փաշա, Օսման փաշա, Տէվրիշ փաշա, Յակոբ փաշա, Խոսրովն եղբայր Հասան փաշա, Մէհմէտ փաշա, Ֆուատ փաշա, Սիւրէյա փաշա, Մավրոյէնի փաշա, Միւնիր փաշա, Միւղիւրիւս փաշա, Իպրահիմ պէյ, Ղալիպ պէյ և իտալական դեսպանատան առաջին թարգման Պ. Պ. Ա. Վէրնոնի։

Սեղանէն առաջ Վեհ. Սուլթանն ունկնդրութիւն մը չնորհեց դեսպանուհւոյն, ի ներկայութեան Մեծ-եպարքոսին, Արտաքին գործոց Նախարարին և արարողապետ Միւնիր փաշայի, և յոյժ սիրալիր կերպիւ խօսակցեցաւ անոնց հետ։ յետոյ թեւն առնելով զՊիրին Պան ի սեղան առաջնորդեց զնա։

Ճաշէն յետոյ, դեսպանը, դեսպանուհին, Մեծ եպարքոսն, Միւնիր փաշա եւ Պ. Վէրնոնի պատիւ ունեցան մէկ ու կէս ժամու չափ տեսակցելու Ն. Վեհափառութեան հետ։ Այս ունկնդրութեան միջոցին, Վեհ. Սուլթանն առաջին կարգի Օսմանիէ պատուանշան չնորհեց իտալական դեսպանին։ այս առիթէն օգուտ քաղելով դեսպանուհին, չնորհակալութիւն մատոյց ասկեց յառաջ իրեն նուիրեալ Շէֆգադ պատուանշանին համար։ Ն. Վեհափառութիւն Իրեն յատուկ չնորհալիր աղնուութեամբ պատասխանեց առ Տիկին Պան՝ թէ իւր բացակայութեան միջոցին դեսպանատուն լցած եր այդ պատուանշանը, գիտնալով թէ մեծ հաճոյք պիտի պատճառէր ան իւր վերադարձին ի Կ. Պոլիս, ապա թէ ոչ ուելի բարեբաստ պիտի համարեր զինքն իւր իսկ ձեռամբ յանձնելով զայն։

Դեսպանն ու դեսպանուհին իրենց գտած ընդունելութեան համար երախտագիտական արտայայտութիւններով հրաժեշտ առին Վեհ. Սուլթանէն և Բերա վերադարձան պալատական կառքերով և ուղեկցութեամբ խումբ մը հեծելազօրաց։

* * *

Վեհ. Սուլթանն հրաւիրած է զՊառոն և Տիկին Պան այս ուրբաթ գիշեր վերստին կայս. պալատ երթալ ներկայ գտնուելու համար թատերական ներկայացման մը զոր պիտի տայ Պ. Թոգէլէի դերասանական խումբն։ Այդ ներկայացման հրաւիրուած են նաեւ միւս դեսպանք և դեսպանուհիք։

Պ. ՎԱՆՏԷՐՊԻԼԴ

Վեհ. Սուլթանին արտօնութեամբ՝ Պ. Վանտէրպիլդ, իւր կինն և ուղեկիցք՝ ընկերակցութեամբ կայս. թիկնապահ Ահմէտ փաշայի, երէկ այցելեցին Թոփ Դաբուի պալատը, կայս. գանձարանն և նոյն պալատան մէջ գտնուած բոլոր բէօշկերն. յետոյ պահ մը հանգչելու առնելով, ըստ վարելիս ս ժողովրեան, պատուասիրուեցան ծխախոտներով, սուրճերով և օյարաներով։

Ամերիկացի հիւրերն յետոյ պալատական կառքերով այցելեցին նաև Սուլթան Ահմէտի մզկիթն և կայս. թանգարանը։ Այսօր ևս Ցօլմա Պաղչէի պալատը պիտի այցելեն։

Այս գիշեր, ամերիկեան դեսպանատան մէջ հացկերոյթ մը կը տրուի ի պատիւ մեծահարուստ ամերիկացւոյն։

ԹԱՂՈՊԵՏԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿԻՐ

Մահմուտ փաշայի նախագահութեամբ կազմեալ յանձնաժողովոյ տեղեկագիրն ի մէջ այլոց կառաջարկէ որ երմտացոյցի հաւասարակշռութեան համար տարեկան 100,000 ոսկւոյ գումար մ'ալ առնուի թաղապետական շրջանակաց հասոյթներէն։

Մ՝ենդէրէս գիտել կուտայ թէ մայրաքաղաքիս թաղապետական տասն շրջանակները չուրջ 180,000 ոսկւոյ պիւտճէ մ'ունին, որուն 75,000 ոսկին բաց կը մնայ արգէն, հետեւաբար ասոնցմէ 100,000 ոսկի պահանջելը զանոնք բոլորովին անգործութեան դատապարտել կը լինի։

ԱՖՐԻԿԵԱՆ ՏՐԻՊՈԼԻՍ

Հռոմէն կը գրեն թէ իտալական կառավարութիւնը չատ յուզուեր է Աֆրիկեան Տրիպոլսոյ իւր հիւպատոսէն ստացած տեղեկագրերէն ի մասին այխատուութեանց ֆրանսական յանձնաժողովոյն որ պաշտօն ունի Թունուզի սահմանագիծը գծել Տրիպոլսոյ կողմէն։ Այդ տեղեկագիրը կը ծանուցանէն թէ Թունուզի ֆրանսական իշխանութիւնը Տրիպոլսոյ հողերէն մեծ մասը իրենց կողմն անցուցեր են։ Հռոմի դահլիճն որոշեր է այս իրողութիւնն հաղորդել Կ. Պոլսոյ իտալական դեսպան Պառոն Պլանի, յանձնարարելով նմա Բ. Դրան ուշադրութիւնն հրաւիրել։ Կը կարծենք սակայն թէ Տրիպոլսոյ իտալական հիւպատոսն յոյժ չափազանցած է իրերը։ (Սրճանոց)

* * *

Իտալական կառավարութիւնը Պէնկազիի մէջ փոխ-հիւպատոս մը կարգած է, որ Աֆրիկեան Տրիպոլսոյ իտալական հիւպատոսարանին իրաւասութեան ներքեւ պիտի գտնուի։

—Բարիզու այլարհագրական ընկերութեան կողմէ 1887ի հրատարակեալ տետրակին մէջ նշանակուած է թէ կայս. կառավարութեան և Ֆրանսայի միջեւ դաշնագրութիւն մը կընքուած է ի մասին փոխոխան Աֆրիկեան Տրիպոլսոյ սահմանագլխոյն։ Թէ՛ զայս ծանուցանելէ յետոյ, պաշտօնական տեղեկութեանց յենլով կըսէ թէ այդ տեսակ պայմանագրութիւն մը կնքուած չէ բնաւ երկու կառավարութեանց միջև։

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ

(Պաշտօնական Աղբ.)

Սարաէվոյ մէջ քաղաքայի քանի մը դէպքեր պատահած լինելով, այդ կողմէն եկող նուագներն հնգօրեայ հսկողութեան պիտի ենթարկուին այն նուագանոցաց մէջ ուր առողջապահական բժիշկ կը գտնուի։

Միւս կողմէ, քաղաքն բոլորովին անհնացած լինելով ի Սկիպիա Մէսիանէն եկող նուագ համար հասատատակ հնգօրեայ քարանտինն նշանակած է և անոր տեղ հաստատած է բժշկական այցելութիւն, ինչպէս կը լինի Սր Իկնայէն եկող նուագ համար։

Այս սրամադրութիւն գործադրելի է դեկտեմբեր 11ն յետոյ մեկնող նուագ համար և այժմ քա անդինա սպասող նուագը պիտի օգտին այս սրամադրութենէ։

Դարատաղ գործակատար Պ. Պարիչ երէկ Բարձր. Մեծ-եպարքոսին և Արտաքին գործոց Վեսմ. Նախարարին ներկայացաց զՊ. Բալամադիչ որ իւր բացակայութեան միջոցին փոխանորդաբար պիտի վարէ գործակատարութեան պաշտօնն։

—Արտաքին գործոց Նախարար Սայիտ փաշա տեղեկանալով որ ռուսական դեսպան Պ. Նէլիտոֆ հիւանդ է, իւր թարգման Միրայել էֆէնտին դեսպանատուն զրկեց և դեսպանին որպիսութիւնն հարցունել տուաւ։

—Պէկիրատէն կը գրեն թէ, Բ. Դրան առաջարկութեամբ յանձնաժողով մը պիտի կազմուի ի մասոյ զբաղելու համար սերպական հողին վրայ Առնաւուտներու ապատակութեան խնդրովն։ Այս յանձնաժողով անձամբ սահմանագլուին երթալով լարար դատած միջոցները ձեռք պիտի առնու։

—Բարիզի աւտրիական դեսպանատան առաջին քարտուղար Պ. Սգէրնէք Կ. Պոլիս փոխադրուած է նոր պաշտօնով և ամսոյս մէջ մայրաքաղաքս պիտի գայ։

—Ցայտնի է թէ չոգեշարժ մեքենայից օրինաց տրամադրութեան համաձայն, որ կը գտնուի Տիւսդորֆի Բ. հատորին մէջ, օսմանեան երկրին օ՛ր և է կողմն հաստատեալ ամէն գործարանատէր պարտի արտօնութեան հրամանագիր մ'ստանալ Առևտրական և Հանրօգուտ չինութեանց Նախարարութենէն։ Այդ Նախարարութիւնն իմանալով որ Սելանիկի գաւառին մէջ հաստատեալ գործարանատէրք ոմանք կատարած չլինելով այս ձեւակերպութիւնն, օրինական արտօնագիր չունին ի ձեռին, խիստ հրամաններ ղրկեց տեղւոյն կուսակալութեան որպէսզի հրաւիրէ այդպիսիներն հպատակիլ հաստատեալ կանոնին։ Այս հրամանին վրայ, ըստ օրինի, իւրաքանչիւր գործարան իւր ունեցած մէն մի կաթսային համար 10ական օսմ. ոսկի պարտի վճարել։ Կուսակալք միանգամայն հրահանգ ընդունած են իրենց իրաւասութեան ներքեւ գտնուող գաւառաց մէջի գործարանաց յատակաձեւը պատրաստելով, յղել յիշեալ Նախարարութեան։ (Առաւ. Լրագիր)

—Կոդէր Լէոնարդ կը ծանուցանէ թէ ծխախոտի Բէժիի տնօրէն Պ. Օպանսս խնդրեր է կայս. կառավարութենէն որ յանձնաժողով մը կազմուի քննելու համար Մալիէի ժողովոյն ու հանրային Պարտուց վարչութեան և Բէժիի ընկերութեան միջեւ կեցած խնդիրներն։

—Ծանուցուեցաւ թէ Պ. տը Հիրշ մտադիր է ասիական երկաթուղեաց մենաշնորհը խնդրել օսմ. կառավարութենէն։ Վիէննայի լրագիր մը կ'ըսէ թէ չկարծուիր որ Պառոն ինք իրեն համար ընէ այդպիսի առաջարկութիւն մը։ Միայն թէ, քանի որ Բանգու

Մեծ. Հայմէր էֆ. ձեռամբ	
Մեծ. Խանձեան Սանտակ էֆ.	20
Ամեն. Երմիեան Հայրիկէ «Սիրաք և Սամուէլ»	օրինակ 100
Մեծ. Բիւզանդ էֆ. Պօղաճեանէ «Գործ. Քերականութիւն Ֆրանս. լեզուի»	5
Վերա. Հայր Մովսէս Վարդ. Ամսէրսոյեանէ «Մարգն»	5
Մեծ. Յ. Յ Պարոնեան էֆ. «Խիկար» Հանդէս	1
Մեծ. Միհրան էֆ. Արիկեանէ «Թրքերէն Նամականի»	2
Մեծ. Արտաշէս էֆ. Գարակէօզեանէ Լուսանկար մը.	

Ի գիտց Հայոց Մաս. Ընկ.
Տնօրէն Ժողովոյ
Ատենապետ Ատենադպիր
Գ. ՁՕՀՐԱՊ Լ. ՓԱՓԱԶԵԱՆ

ԿԱՒԿԱՍԵԱՆ ՍՈՒՐՀԱՆԱԴԱԿ

Ցայտնի է թէ Ռուսիոյ երբեմն ինքնիշխան բոլոր երկիրներն այժմ կառավարուին վարչական տասանձին տասանձին գրութիւնամբ այսպէս օրինակ Բոլոնիան, Ռուսիոյ Անդրկասպեան երկիրն, Հայաստան Կովկաս, Թուրքեստան, Ֆինլանդիա և Սիպիր։ Պետութեան այսչափ բաժանումներն, «նահանգքոյս ի պանծալին և իրենց մասնաւոր օրէնսդրութիւնները, տեղական և կեդրոնական տասանձին հաստատութիւններն որոց պահպանման համար, բնականաբար անհամեմատ չատ ծախք պէտք է։ Այս՝ այլ պարագայներ ի նկատ ունենալով. կը գրէ Ռուսկի Կուրիէր, «ուստ կառավարութիւնը մտադիր է մի և ընդհանրական օրէնք հաստատել համայն Ռուսիոյ համար։ Այնուհետեւ Ռուսիոյ բոլոր հպատակներն առանց ազգի և կրօնի խառնութեան պիտի ունենան համահաւասար իրաւունք և պարտաւորութիւն։ Իսկ Հրեայք, Գնչուք և Ասիոյ թափառական ժողովուրդք պիտի կառավարուին առանձին օրէնքներով։

—Նովոյէ Վրէմա կը ծանուցանէ թէ Վրաստանի էկզարքութեան մէջ տեղի պիտի ունենան հիմնական փոփոխութիւններ։ Կառավարութեան հրամանաւ Նոր-կայ էկզարքին կը յաջողէ Աստրախանի առաջնորդ Պալլպի։ Էկզարքութեան վարչական փոփոխման հետ միասին պիտի փոփոխուին Կաւկասի բոլոր հոգեւոր դպրոցներու արդի դրութիւնը։ Բաց ատոր Պալլպի ի նկատ պիտի առնու Կաւկասոյ մասնաւորաց ընկերութեան և հոգեւորական անութեան գործունէութիւնը։

—Պաքուէն կը հեռագրեն ռուս լրագրաց թէ ահագին հրդեհ ծագեցաւ նաֆթային գործարանաց մօտ, այն տեղն ուր կը հսկին նաֆթի աւելցուկներն։ Հրդեհի բռնկումէն ասանեցան նաֆթային գործարանք մինչեւ երկու վերստ տարածութեամբ։ Հրդեհն, որ սեւեց քառասուն ութ ժամ, վերջապէս մարեցաւ ալագի միջոցաւ։

